# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1. ԳՅԱՆՔԻՆ ՕՐԵՐԸ

Շուշվա Ղալին դա̈րզի Ալիքսանին տոնը մին ղոնաղ ա կյամ։

Ալիքսանը էտ ո̈ւրո̈ւգյո̈ւնը լա̈վ պադրաստոթուն ա քաշըմ, մին քանի ղոնաղ էլ ընդրա կըլխեն կանչըմ, պատեվ տամ։

Էտ ղոնաղին աշկը փըռնըմ ա էտ Ալիքսանին հըրեվանեն կընեգյը։ Ըտրա նըհետ սիլի-բիլի յա անըմ, էտ օրը էտ ղոնաղեն հետե լա̈վ ա անց կըենըմ։

Ղոնաղը չամադանան մին ղալին, հաստ տետրակ ա հանըմ էտ օրը կյիրըմ։

Ալիքսանը տըեսնըմ ա, ասըմ.— Էտ հի՞նչ ըս կյիրըմ։

Ղոնաղըն ասըմ ա.— Գյանքիս օրերըն ըմ կյիրըմ։ Էտ ա էտքան ղըեռ մարթ ըս, գյուղում չը՞ս, վեր մարթիս գյանքըմը լոխ օրերը չի լա̈վ անց կըենըմ։ Իմ գյանքիս լոխճան լա̈վ օրերը քառասունըիրեքըն ա իլա̈լ։ Էս օրըս էլ կըտըեռնա քառասունըչորսը։

Ալիքսանը ճաղար աշկերը չըռած ասըմ ա.— Էտ դո̈ւզ ը՞ս ասըմ։

Ղոնաղը թա̈.— Բա հի՞նչ... Մընացած օրերը ուրո̈ւր նըման ըն։

— Դե վեր իտի յա՛, իմ գյանքըմըս մինա̈կ մին լա̈վ օր ա իլա̈լ, էն օրը առաչի դո̈նըմը պա̈չա̈լ ըմ իմ սիրեկի Թա̈զա̈գյո̈ւլիս։

Ղոնաղըն ասըմ ա.— Հա՛, Ալիքսան, կյիրի՛, կյիրի՛, վեր էս աշխարքըմըս մին օր ըս ապրա՛լ։